

Յուրերորդումն երեսցաւ

Սուրբ Գրիգորի Լուսաւորչին,
Կամար կանգնեալ էր ամպեղէն,
Խաչն ի վերայ էր լուսեղէն.
Մեք ի յայն փայսն. եւայլն:

Յիններորդումն երեսցաւ

Խաչն ի լերինն Չիբենեաց
Պայծառացեալ ի Գողգոթա,
Ի սուրբ քաղաքն Երուսաղէմ.
Մեք ի յայն փայսն. եւայլն:

Ի Ժ. երորդումն երեսցաւ

Խաչըն լուսովն հրաւալի,
Քրիստոնէից պարծանք յայսնի,
Ուրացողաց կոծող լինի.
Մեք ի յայն փայսն. եւայլն:

Եւրնապայծառ լուսով փայլի,

Եկեալ ի Գողգոթա կանգնի,
Յամէն ազգաց երկրպագի,
յարածգական յաւիտենին.
Մեք ի յայն փայսն. եւայլն:

Թ Ա ի Ա Ն Ձ Ա Ն Ք

Դուն խօլ ասուածք ոսկեթեւ մեղունեւուն,
Դուն ջինջ ասուածք բիւրեղին ուր կը հնչէ
Աղբիւրներու ծիծաղին մէջ, անունդ ի՛նչ է,
Որ քեզ կանչէ՛լ կարենայի լուռ իմ հոգւոյն . . .

Կարենայի՛ քեզ ընդգոգել ստերներուն
Թափանցաւոր որոնց մէջէն պիտի գրկէ
Լոյսին կառօն իր երեւոյթը սասափէ
Համբաներուն անհուն քնարի նըման քրքումն . . .

Կարենայի՛ քեզ դիտելով զմայլահար՝
Դառնալ սրտիս ու միտք քեզի՛ զսնել իր մէջ,
Դուն խօլ ասուածք բոցերուն եւ անհամար

Ծաղիկներուն, ո՛վ պիտի տայ ինծի նորէն
Սիրոյ բուրվառը խնկաւէտ եւ հուրն անւէջ
Որոնցմով դուն անցար ասեմ մը գաղտնօրէն,

Ո՛վ իմ ասուածքս, հոգիիս ներաշխարհէն . . .

ԱՐՄԷՆ ԵՐԿՍԹ